ցեալ պէկլէրպէկի մի, կոչեաց զնոսա, զի անդ
է քանն Արեւորդաց, որպէս յԱրզրում բոչայք,
165 եւ պատվիրեաց մի երթալ անդ: Եւ ազդեցին
թէ սոքա նամազ չունին. ոչ հայ են, ոչ ջհուտ,
ոչ հոռոմ. միայն հայնակ կու զրուցին: Կո-
չեաց զնոսա դարձեալ եւ ասէ. Զի՞նչ հաւատ
ունիք դուք: Եւ նոքա ասին թէ Հայոց: Ասէ
170 զնոսա. Ապա զնացէք նոցա ժամն, ապա թէ
ոչ եկէք ի մեր մէջիթն. կամ սրով անցանեմ
զձեզ: Նոքա սկսան աղաղակել եւ կաչառք
ավեալ յանձն առին զնալ Հայոց եկեղեցին.
ապա թոյլ ետ նոցա. եւ սաստիկ հրաման
175 եհան, թէ ոք չզնայ, մալն թաղաւորի,
զլուին հատցի: Եւ այն մէջիթն պէթալ մնաց.
վասն որոյ ցիր ու ցան եղան. ոմանք Պարս
զնացին, այլք յԱսորիս. եւ կէսք ի Թոխաթ,
Մարզուան եւ այլն: Եւ որք մնացին անդ ահէ
180 եւ յերկիւղէ վարձէին զոմն հայ, թէ ինձ հա-
մար զնա՛ յեկեղեցի. եւ ոմանք նօպաթով եւ
կարգաւ զնային ժամ շաբթէ շաբաթ, եւ զայն
ակամայ, որպէս Հրեայքն Հռոմայ եկեղեցին:

Եւ միւս զուտն զերեզմանատուն էր
185 Հայոց, յորում կային մեծագին եւ մեծ տա-
պանք զրովք, որպէս եւ ի Լէհ. եւ քարինքն
ամէն սեւ էր: Իսկ բերթն յոյժ ամուր եւ ա-
նառիկ մեծամեծ աշտարակօք եւ վիմօք շի-
նեալ: Եւ ներքեւ պարսպին զնայ մեծ գետն
190 Եփրատէս եւ ընդ միմիանս խառնեալ յԱսո-

164 յարեւորդաց: — 182 զայն: — 183 հրէայք: եկեղեցինն: — 187 ամէն: